

# ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

## HEBREW ILLUMINATED MANUSCRIPTS

Միջնադարեան արժենութեան գասափաս Դր. Բեղալէլ Նարկիս քանի մը տարի առաջ (1969) լոյս ընծայեց Եբրայական Նկարագործ Զեռագիրներ տիտղոսով զեղեցիկ գիրք մը, անդւերէն լեզուով։ Յօյժ շահեկան հատոր մը՝ որ յատակ և բաւարար գաղափար մը կու տայ Հրէական մանրանը կարչութեան մասին։

Հատորը կ'ընդգրկէ Ժ-ԺԵ. զարերը, ուր յաջորդաբար ներկայացուած են Արևելեան(4), Սպանիական(17), Ֆրանսական(3), Գերմանական(21), և Իտալական(15) ձագումով՝ նկարագարդ 60 ձեռագիրներ, բնդ հանրապէս կրօնական և ծխական մատեաններ։ Ինչպէս՝ Հին Կտակարան, կամ Հնդամատեան (20), Աղօթագիրք(10), և Հակիատա (17)։ Այս վերջինը տուններու մէջ կը կարդացուի պասեքի իրիկուան ընթրիքի պահուն։

Հեղինակը ընդարձակ Ներածութեամբ մը (էջ 13-39) հետզհետէ կը ներկայացնէ՝ Հրէական կեցուածքը արուեստի հանդէպ, Հրէական ձեռագիրներու նկարագարդումը, Հրէական ձեռագիրներու մէջ կիրարկուած նիւթերը և թեքնիքը։ Ապա մի առ մի կը ծանօթացնէ Արևելեան Դպրոցը, Սպանիական Մանրանկարչութիւնը, Ֆրանսական Դպրոցը, Գերմանական Դպրոցը, և Իտալական Դպրոցը։ Այս գլխաւոր հատուածները ունին իրենց ստորաբաժանումները, ուր առանձին կը քննուին Կտակարանները, Աղօթագիրքերը, Հակիատաները, և այլ նկարագարդ մատեաններ։ Իսկ հատակական Դպրոցը ներկայացուած է առոնձին դարերով ալ՝ ԺԴ. ԺԴ. և ԺԵ։

Ներածութենէն ետք կու զան նկարները, թիւով 60, տպուած առանձին, մասնաւոր ընտիր թուղթի վրայ, և փակցուած կարդով, աջակողմեան էջին վրայ, որուն դիմացը ձախ կողմը տրուած են անհրաժեշտ բացարութիւնները և տեղեկութիւնները։ Գունաւոր պատկերներու վերարտադրութիւնը շատ յաջող է և գոհացուցիչ։

Կարելի է երեակայել թէ որքան գժուար եղած պիտի ըլլայ պատրաստել նման հատոր մը, որուն նիւթ հայթայթող քաղաքները այնքան շատ են և հեռու իրարմէ։ Ահաւասիկ անոնց շարքը և իրաքանչիւրէն առոնւած նկարներուն թիւը. Լենինկրատ(2), Երուսաղէմ(14), Լոնտոն(12), Լիզապոն(1), Պերլին(1), Սարայեվո(1), Լէչուորթ(3), Մանչեստը(1), Պուտարեշտ(3), Օքսֆորտ(2), Քորենհակ(1), Նիւենորք(3), Համպուրէ(3), Փարիզ(2), Միլան(1), Փարմա(1), Տարդշատ(1), Սինսիննաթի(1), Քէյմպրիճ(2), Հռոմ(1), Ռւաշինգթոն(1), Պոլոնիա(1), Վերչելի(1), և Հռովիթոն(1)։ Պէտք է աւելցնել նաև որ վերոյիշեալ քաղաքներէն անոնք որ մէկէ աւելի նկարներուն ներկայացած են, յաճախ այդպէս են ըրած՝ ձեռագիրներ և մանրանկարներ տրամադրելով մէկէ աւելի թանգարաններէ և մատենադարաններէ։ Այսպիսով արուեստանէր ուսանողներուն և ընթերցողներուն մատչելի դարձած են աւելի քան տասնեակ մը երկիրներու մէջ տարասփիւռ մատեաններու և մաղաղաթներու պարունակած հատընտիր զարդագրերն ու պատկերները՝ Հարազատ վերարտադրութեամբ։

Կ'արժէ յատկապէս շեշտել նաև որ ներկայ հրատարակութեան համար կիրարկուած մեթուր օրինակելի է, և կատարուած խոճամիտ աշխատանքը դնահատելի արդարէ։

Ն. ԱՐՔ. ԾՐՎԱԿԱՋՆ